ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/33

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հաշվի առնելով «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից 27.02.2018թ. ներկայացված՝ «Հայրենիք-Սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Պիտոն Արս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը անվավեր ճանաչելու, «ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությունը շտկելու և ընթացակարգի 1-9-րդ չափաբաժինների մասով «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պահանջի մասին բողոքը և հիմք ընդունելով Խորհրդին ուղղված՝ ԳԲԽ-ԱՄ-2018/33 բողոքն առանց քննության թողնելու մասին «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի 02.03.2018թ. գրությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 45-րդ կետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից 27.02.2018թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**